ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000,(093)991354, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2017թվականի N 19

ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը ներկայացրեց Արարատի մարզպետի 18.05.2017 թվականի թիվ 1/5/1-1/3255-17 գրությունը:Առաջարկեց համայնքի 2017 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել լրացում և փոփոխություն /ավելացում/ համաձայն << Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի /ընդունված 16.12.2016 թ., ՀՕ-234-Ն/: Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված տեղական վճարները պետք է նախատեսվեն և մուտքագրվեն համայնքի բյուջե՝ այդ թվում համայնքային ենթակայության մանկապարտեզի և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից գանձվող ծնողական վճարները:

Առաջնորդվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի ,6-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Դիմիտրով համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 26-ի թիվ 7 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

Դիմիտրով համայնքի 2017 թվականի բյուջեում լրացում և փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ կողմ
2. ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ կողմ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ կողմ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ կողմ
6. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ
7. ՍՈՒՄԲԱԹՅԱՆ ՆՎԱՐԴ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000,(093)991354, dimitrov-gyuxapetaran@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2017թվականի N 20-Ն

ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը առաջարկեց 2017 թվականի բյուջեում կատարել համապատասխան լրացում և փոփոխություն՝ եկամտային մասը ավելացնել 600.0/ վեց հարյուր/ հազար դրամ: Համաձայն << Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով սահմանված տեղական վճարները մուտքագրել համայնքի բյուջե՝ այդ թվում համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայություններից գանձվող ծնողական վճարները: Բյուջեի ծախսային մասում՝ 600.0 հազար դրամը ավելացնել 09 01 01 51 -նախադպրոցական ուսուցում ծրագրի 4239 -ընդհանուր բնույթի այլ ծառայություն- հոդվածում:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով, համայնքի ավագանին որոշում է՝

Դիմիտրով համայնքի 2017 թվականի բյուջեում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.
1. Եկամտային մասում ավելացնել՝ տեղական վճար -մանկապարտեզի ծառայություններից գանձվող ծնողական վճար- 600.0 հազար դրամ: Ընդհամենը՝ տեղական վճար 615.0/վեց հարյու տասնհինգ / հազար դրամ Հաստատել համայնքի 2017 թվականի բյուջեն 33092.92 հազար դրամ:
2. Ծախսային մասում՝600.0 հազար դրամը ավելացնել 09 01 01 51 -նախադպրոցական ուսուցում ծրագրի 4239 -ընհանուր բնույթի այլ ծառայություն- հոդվածում: Ընդհամենը՝09 01 01 51 - նախադպրոցական ուսուցում ծրագրի 4239 հոդվածում՝8600.0/ ութ միլիոն վեց հարյուր/ հազար դրամ:Հաստատել 2017 թվականի բյուջեի ծախսային մասը 33092.92 հազար դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ կողմ
2. ԻՎԱՆՈՎԱ ԱԻԴԱ կողմ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ
4. ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ կողմ
5. ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ կողմ
6. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ կողմ
7. ՍՈՒՄԲԱԹՅԱՆ ՆՎԱՐԴ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ